



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 30 » 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0218-23

Ձեռնարկողը՝

«Սուլար Սթար» ՍՊԸ

Քաղաք Երևան, Արաբկիր 0012, Փափագյան փ. , 2. 23, բն. 19

Գործունեությունը՝

Անի համայնքի Բագրավան բնակավայրի, 17-րդ փողոց, թիվ 6/1 հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 7 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲՓ № 0218-23

«30» Կոնվերթ 2023թ.

**Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 17-րդ փողոց, թիվ 6/1
հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Սոլար-Սթար» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Շիրակի մարզ, Բագրավան բնակավայր

Ներածական մաս. «Արփի» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը նախատեսվում է կառուցել Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչական տարածքում, 17-րդ փողոցի թիվ 6/1 հողամասում: Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրից՝ Անիավան բնակավայրից գտնվում է 0,6կմ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության Արևային կայանի և ենթակայանի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախատեսվում է կառուցել 72574վտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով:

Արևային կայանի, ենթակայանի և օդային գծի կառուցումը կատարվելու է համաձայն «ՀԷՑ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Հողատարածքի ընդհանուր մակերեսը 10հա է, իսկ Ֆոտովոլտային վահանակների զբաղեցրած մակերեսը կազմելու է 3հա:



Նախատեսվում է կառուցել տրանսֆորմատորային ենթակայան 35/2x0,8 լարման, 6600ԿՎԱ հզորությամբ: Տրանսֆորմատորային լրակազմը JUPITER6000K-H1 տիպի է: Տրանսֆորմատորային ենթակայանի և դրա սնման համար կառուցվելու է 35ԿՎ օդային գիծ:

Նոր կառուցվող ենթակայանը նախատեսվում է միացնել գոյություն ունեցող 35ԿՎ «Հայկաժոր» օդային գծին: JUPITER-6000K-H1 լրակազմը բաղկացած է երեք բաժիններից՝ ցածր լարման բաժին, որում գտնվում են 0,8ԿՎ վահանները, տրանսֆորմատորի բաժին, որում տեղադրված է 6600ԿՎԱ հզորության, 35/0,8ԿՎ լարման յուղային երկփաթույթ տրանսֆորմատորը, բարձր լարման բաժին, որում տեղադրված են 35ԿՎ անջատիչներ և 35ԿՎ գերլարման սահմանափակիչներ: Տրանսֆորմատորի բաժնի տակ նախատեսված է յուղընդունիչ:

Ենթակայանի տարածքում տեղադրվելու է բլոկային մետաղական կոնստրուկցիա, որի վրա մոնտաժվում են 3 հատ հոսանքի տրանսֆորմատոր և 3 հատ լարման տրանսֆորմատոր:

35ԿՎ ՕԳ-ի համար օգտագործվելու է N1 AY-2 հենարանից, մինչև N8 հենարանների հատվածը: Նշված հատվածը կառուցված է 35ԿՎ «Սևան» տիպի հենարաններով: Հաղորդալարը AC-70/11 տիպի է, օդային գծի շանթապաշտպանությունն իրականացվելու է 2 հատ C-35 տիպի ճոպանով: 35ԿՎ ԵԿ-ի մուտքն ապահովվելու համար, գոյություն ունեցող N9 Ո «Սևան» տիպի հենարանն ապամոնտաժվելու է: Նախատեսված է երկշղթա N9 Y110-4+5 տիպի հենարանի տեղադրում: N9 Y110-4+5 տիպի հենարանից սկսած, մինչև ԵԿ-ի պորտալը, 10ԿՎ «Անիպեմզա» ՕԳ-ի համար նախատեսված է երկաթբետոնե հենարաններով նոր հատվածի կառուցում: Արևային կայանը համակարգին միացնող 35ԿՎ ՕԳ-ի երկարությունը՝ ԵԿ-ի պորտալից մինչև ճյուղավորման կետ կազմում է 1309մ, որից նոր կառուցվող հատվածի երկարությունը 45.0մ է, իսկ գոյություն ունեցող հատվածի երկարությունը՝ 1264.0մ:

10ԿՎ օդային գիծը կառուցվում է AC-50/8 կտրվածքի հաղորդալարերով: Երկարությունը կազմում է 1307մ: 10ԿՎ ՕԳ-ն N9 նոր տեղադրվող 35 կՎ հենարանը ճյուղավորվելով գոյություն ունեցող «Անիպեմզա» 10ԿՎ ՕԳ-ից, միանում է նոր տեղադրվող ծայրային N1 Y110-1 տիպի հենարանին, այնուհետև շարունակվում է մոնտաժվել նոր տեղադրվող N2-ից մինչև N14 հենարաններով:

ՕԳ-ի նվազագույն հեռավորությունը գետնից պետք է լինի 7մ: ՕԳ-երի հաղորդալարերի և հենարանների միջև նվազագույն հեռավորությունները հաղորդալարերի առավելագույն շեղման դեպքում պետք է լինի ոչ պակաս 3մ: Ավտոմոբիլային ճանապարհների հետ ՕԳ-ի մոտեցման դեպքում նվազագույն հորիզոնական հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 5մ-ից, իսկ ուղղահայաց հեռավորությունը՝ 7մ:

Հենարանից մինչև ստորգետնյա գազատար հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 5մ:

10ԿՎ մալուխագծի կառուցում: Մալուխի կտրվածքն ընտրվել է ըստ գոյություն ունեցող ՕԳ-ի կտրվածքի: Մալուխի էկրանն անհրաժեշտ է հողանցել՝ միացնելով կցորդիչների հողանցման եզրագծերին: 10ԿՎ մալուխագծի երկարությունը կազմում է 58մ, որից՝ 42մ խրամուղով, 8մ՝ N14 հենարանի երկայնքով, 8մ՝ N15 հենարանի երկայնքով: Մալուխագիծը ներբակային ճանապարհին զուգահեռ անցկացնելիս մալուխները մոնտաժվելու են 0.7մ խորության վրա: Մալուխները խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ փռվելու է 100մմ հաստության ավազե նախապատրաստական շերտ, այնուհետև տեղադրվելու են մալուխները և ծածկվելու են ավազե պաշտպանիչ շերտով: Ավազե պաշտպանիչ շերտի վրա տեղադրվելու է կավե աղյուս՝ մեխանիկական վնասվածքներից պաշտպանելու համար, ապա խրամուղին լցվելու է ավազակոպճով:



Ենթակայանի միացումը 35կՎ օդային գծին: Կոնտեյներից ելքն իրականացվելու է այլումինե հաղորդալարերով АПвП 3x70մմ² տիպի եռաջիղ մալուխով: Նախագծով նախատեսվում է մալուխային կոնստրուկցիայի տեղադրում: Բլոկի վրա հոսանքի և լարման տրանսֆորմատորներից բացի, տեղադրվում է գերլարման սահմանափակիչներ Y10W-51 տիպի և գծային բաժանիչ՝ GW4-40.5II: Տարածքում նաև տեղադրվելու է գծային պորտալ, որին միանում է գոյություն ունեցող 35կՎ օդային գծից ճյուղավորումը՝ մի կողմից, և ենթակայանը՝ մյուս կողմից: Մալուխի անցկացումը խրամուղով կատարվելու է համաձայն «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման» տեխնիկական կանոնակարգի և «А5-92» տիպային նախագծի: Նախատեսվում է կայանի և ենթակայանի ընդհանուր հողանցման ցանցի իրականացում: Հողանցման արտաքին կոնտուրն իրականացվելու է 40x4 շերտապողպատով, որը տեղադրվելու է հողում 0,7մ խորությամբ և ուղղահայաց էլեկտրոդներով (անկյունակներ) 50x50x5մմ՝ 2մ երկարությամբ: Բոլոր միացումներն իրականացվելու են եռակցումով: Բոլոր մետաղական կոնստրուկցիաներն անհրաժեշտ է միացնել հողանցման կոնտուրին: Հողանցման սարքվածքի դիմադրությունը տարվա յուրաքանչյուր պահին չպետք է գերազանցի 4 Օհմ-ը: Կայմակի ուղիղ հարվածներից ենթակայանի պաշտպանությունն իրականացվելու է շանթարգելով, որը տեղադրվելու է 35կՎ պորտալի վրա: Ենթակայանի ամբողջ տարածքը և բոլոր սարքավորումներն ընդգրկված են շանթապաշտպանության գոտում:

Սույն նախագծով նախատեսված է արտաքին լուսավորություն: Պորտալի վրա տեղադրվելու են 2 հատ 200Վտ հզորությամբ LED լուսարձակներ: Լուսարձակները սնվելու են 220Վ լարման ցանցից: Կայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 2մ բարձրության մետաղական ցանկապատով՝ դարպասային մուտքով:

Տարածքում նախատեսվում է կառուցել 25մ²/7մ² պահեստ +18մ² /օպերատորական շինություն՝ ներքին հարդարումով:

Տարածքում նախատեսվում են կրակմարիչներ և հրդեհաշիջման վահան: Նախատեսվում է օպերատորական շինություն մետաղական վագոն-տնակ՝ 7 մ² չափերի պահեստային մասով՝ խոտանված մասերի և գործածությունից դուրս եկած վահանակների ժամանակավոր պահման համար:

Գործունեության տարածքից մոտ 1000քմ-ն արտադրական տարածքն է:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք: Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է 2 հատ անիվների լվացման հարթակ՝ յուրաքանչյուրը 8,0x3,5մ չափերի: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային ջրահեռացման ցանցում: Շինարարական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1 հատ 1,1մ չափերի պարզարան: Մեխանիկական նստեցումից հետո պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շինարարական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին՝ Տարածքում աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր հանգստի կացարան(տնակ):



Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ: Արևային կայանի կառուցման արդյունքում հանվելու է 1500մ³ գրունտ, որից 1400մ³ հետլիցք է կատարվելու, մնացած 100մ³ կհեռացվի աղբավայր:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Զրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից: Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ շարժական 2 հատ 1,0x1,5 չափերի բիոզուգարանից՝ լվացարանով:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինարարական աղբի տեսքով, նյութերի մնացորդներ (ավազ, շեբեն, ցեմենտ, պլաստմասե իրեր և այլն), աղտոտված լաթեր, պարկեր, կենցաղային աղբ, մետաղական մնացորդներ:

Կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով, իսկ վերին մասը ծածկվելու է բուսահողով:

Արևային կայանի տեղակայման և ՕԳ-ի շինարարական աշխատանքները տևելու են 7 ամիս՝ ըստ ժամանակացույցի:

Արևակայանի, ՕԳ-ի հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

Ֆոտովոլտային կայանի աշխարհագրական կոորդինատները հետևյալն են՝
հս. լայն. 40°27'22.84"N արլ. երկայն. 43°37'57.32"E, ծովի մակերևույթից 1460մ բարձրության վրա:

Արևային էլեկտրակայանի տեղադրման համար նախատեսվում է կառուցել մետաղական կոնստրուկցիաներ, որոնք ամրացվում են գետնին 1,2մ բարձրությամբ երկաթբետոնյա հիմքերով:

Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 12844 հատ բազմաբյուրեղային երկողմանի ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 565Վտ առավելագույն հզորությամբ, որոնք միացած են 20 հատ 330կՎտ, հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից՝ մալուխներով: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են կոնստրուկցիայով հորիզոնի նկատմամբ 30° թեքվածությամբ, առնվազն՝ 850սմ բարձրության վրա: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար:

Տվյալ տարածքում գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 10մ-ից խորը հորիզոններում: Վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունն ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ 0.3g:

Ըստ հայտի գործունեության ենթակա տարածքում բացակայում են բնության, պատմամշակութային հուշարձաններ: Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային և ասֆալտապատ ճանապարհով:



Գործունեության ենթակա և հարակից տարածքում ըստ հայտում ներկայացված տեղեկատվության, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակները բացակայում են:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավացում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Զրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին:

-Գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով:

-Տարածքում նյութերը պահել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ:

-Շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, պարբերաբար իրականացնել ստուգումներ:

- Հողի բերրի շերտը կհանվի և կպահվի՝ համաձայն Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան:

-Շինարարական տեխնիկայի լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

-Մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար:

-Շինարարական թափոնները՝ շինադր, բետոնի մնացորդներ, կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը կտեղափոխվի աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերել հնարավորինս նախկին տեսքի:

-Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին, իսկ սև մետաղի ջարդոնը մասնագիտացված կազմակերպություններին:

Արևային կայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 7մ² չափերով փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու պրոդյուսերի կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից



դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ պայմանագրային հիմունքներով՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է տարեկան 300,0 հազ. ՀՀ դրամ գումար:

Գործունեության իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Շինարարության փուլում օդային ավազան արտանետումների մեղմում՝ օդի աղտոտումը կանխելու նպատակով (փողի, ծխազագեր) ամիսը 1 անգամ, շինհրապարակում ամենօրյա:

- Հողային ռեսուրսների մոնիթորինգ՝ շաբաթը մեկ անգամ:

- Կենսաբազմազանության մոնիթորինգ՝ գործունեության և հարակից տարածքներում:

- Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում, կենցաղային աղբի հեռացում՝ չալանավորված ստուգումներ՝ օրվա բոլոր ժամերին:

- Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ամենօրյա վերահսկում:

- Շինհրապարակում աղմուկի մակարդակի, տատանումների պարբերաբար չափումներ աղմկաչափի միջոցով:

- Բացառել հենասյուների տեղադրումը սողանքային հատվածներում:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 17-րդ փողոց, թիվ 6/1 հողամասում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի» կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Շիրակի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնավայրերի և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները:



- Անհրաժեշտ է շինարարության ավարտից հետո իրականացնել տարածքի բարեկարգում: